

## Ապրանքների առաքում

Հաճախորդի կողմից հայտը ստանալուց աշխատանքային 24 ժամվա ընթացքում առաքման ծառայությունը կապնվում է հաճախորդի հետ և ձևակերպում վերջնական պատվեր:

Հաճախորդի կողմից սխալ և/կամ չգործող կոնտակտային հեռախոսահամար թողնելու դեպքում, ինչպես նաև թողնված կոնտակտային հեռախոսահամարին 2 օրից ավել չպատասխանելու դեպքում հայտը համարվում է անվավեր:

Հայտն անվավեր ճանաչվելու դեպքում հաճախորդը կարող է գրանցել նոր հայտ:

Ապրանքը կարող է առաքվել առաքման ծառայության միջոցով Պատվերում նշված Գնորդի հասցեով: Առաքումն անվճար է:

Ապրանքների առաքման ժամկետը Երևանում՝ պատվերի ձևակերպման ամսաթվից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ապրանքների առաքման ժամկետը ՀՀ շրջաններում.

ՀՀ շրջանների քաղաքային համայնքներ՝ պատվերի ձևակերպման ամսաթվից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ շրջանների գյուղական համայնքներ՝ պատվերի ձևակերպման ամսաթվից տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք կամ արտասահման առաքում չի իրականացվում:

Առաքումն իրականացվում է շաբաթվա յուրաքանչյուր աշխատանքային օր 10:00-ից մինչև 18:00 ներառյալ: Առաքման հստակ ժամը համաձայնեցվում է Գնորդի և առաքման ծառայության աշխատակցի հետ միասին հեռախոսով, որը նշված է Պատվերում:

Արվում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի պահպանվի առաքման ամսաթիվն ու ժամը, որը համաձայնեցված է Գնորդի հետ Պատվերով, սակայն հնարավոր են առաքման ուշացումներ անկախատեսելի հանգամանքների բերումով, որոնք մեր մեղքով չեն տեղի ունեցել:

Առաքման ծառայության կողմից ապրանքի առաքման դեպքում այն հանձնվում է Գնորդին կամ անձին, որը Պատվերում նշված է որպես ստացող:

Ապրանքի հանձնման ժամանակ առաքման ծառայության աշխատակիցն իրավունք ունի Գնորդից պահանջել ներկայացնել Գնորդի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ), ինչպես նաև պահանջել նշել ձևակերպված Պատվերի վավերապայմանները (պատվերի համարը, և այլն): Վաճառողը երաշխավորում է Գնորդի անձնական տեղեկատվության գաղտնիությունը ու պաշտպանությունը :

Ապրանքի հանձնման պահին առաքման ծառայության աշխատակիցը ցուցադրում է Գնորդին Ապրանքի արտաքին տեսքն ու լրակազմությունը: Գնորդը Ապրանքի ստացման պահին ստանում է Ապրանքի փաստաթղթերի փաթեթ՝

- Առքուվաճառքի պայմանագիր (եթե կիրառելի է),
- Ապառիկի պայմանագիր և դրան կից այլ փաստաթղթեր, որոնք գործածվում են ապառիկ գնման ընթացակարգերում (այն դեպքում, եթե Գնորդի կողմից ընտրվել է ապառիկ գնման տարբերակը):
- Փաստաթուղթ, որը հաստատում է վճարումը ՀՀ օրենսդրության համաձայն: Բոլոր տպագիր նյութերը, որոնք մտնում են առաքման լրակազմի մեջ:
- Երաշխիքային կտրոն (այն դեպքում, եթե այն նախատեսված է):

Գնորդը իր ստորագրությամբ հաստատում է առաքման ծառայության աշխատակիցի կողմից ներկայացված փաստաթղթում, որ չունի Ապրանքի արտաքին տեսքի և լրակազմության վերաբերյալ որևէ գանգատ: Գնորդի կողմից Ապրանքի ընդունումից հետո, առաքման ծառայության աշխատակիցը չի ընդունում ապրանքի արտաքին տեսքի և լրակազմության վերաբերյալ որևէ գանգատ:

Ապրանքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը փոխանցվում է Գնորդին Ապրանքը նրան փոխանցելու և Գնորդի կողմից Պատվերի առաքումը հաստատող փաստաթղթերը ստորագրելու պահին:

Եթե Գնորդը պատվիրել է «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից տրամադրվող Կապի ծառայություններ, Բաժանորդի հետ կնքվում է կապի ծառայությունների մատուցման բաժանորդային պայմանագիր:

## **Վճարման պայմանները**

### **Կանխիկ ձեռքբերում**

Վճարումը կատարվում է Գնորդի կողմից առաքման ծառայության աշխատակցի կողմից ապրանքը Գնորդին հանձնելու պահին: Վճարումը կատարվում է ՀՀ դրամով կանխիկ դրամական միջոցներով պատվիրված Ապրանքի արժեքի ողջ չափով: Ապրանքը ենթակա չէ Գնորդին փոխանցման այն դեպքում, վերջինիս կողմից վճարումից հրաժարվելու կամ Ապրանքի առաքման պահին Գնորդի մոտ պատվիրված Ապրանքի ողջ արժեքի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում:

### **Ապառիկ ձեռքբերում**

Գնորդը կարող է ապրանքի գնման համար ընտրել «Ապառիկ ձեռքբերում» տարբերակը: Տվյալ դեպքում առաքման ծառայության աշխատակցի կողմից և Գնորդի թույլատվությամբ կատարվում է հարցում գործընկեր Բանկին՝ Գնորդի հետ ապառիկ գործարքի թույլատվության վերաբերյալ: Գործընկեր Բանկի կողմից դրական պատասխանի դեպքում առաքման ծառայության աշխատակիցը տեղեկացնում է այդ մասին Գնորդին և վերջինիս հետ համաձայնեցնում առաքման ժամկետներն ու պայմանները սույն Կանոնների շրջանակներում: Վճարումը կատարվում է Գնորդի կողմից առաքման ծառայության աշխատակցի կողմից ապրանքը Գնորդին հանձնելու պահից սկսած, գործընկեր Բանկի սահմանած Վճարման գրաֆիկի համաձայն: Վճարումը կատարվում է գործընկեր Բանկի և Գնորդի միջև կնքվող պայմանագրի և դրան կից մարման գրաֆիկի համաձայն: Ապրանքը Գնորդին փոխանցվում է իրեն հարմար վայրում, վերջինիս կողմից գործընկեր Բանկի հետ ապառիկի պայմանագրի և դրան կից փաստաթղթերի փաթեթի ամբողջական ստորագրման դեպքում:

## **Ապրանքների և ծառայությունների նկարագրությունները և գները**

Հեռախոսահամար և SIM-քարտ.

- Գեղեցիկ համարների արժեքը՝ <http://mobile.beeline.am/am/main/services/service.wbp?id=80e30461-a5e8-42f0-81c1-855869ebf33f>
- Կապի ծառայությունների արժեքը կախված է սակագնային փաթեթի ընտրությունից: Մանրամասն՝ <http://mobile.beeline.am/am/main/tarifs/all/index.wbp>

Մոդեմների արժեքը կախված է մոդեմի տեսակից.

- USB մոդեմների գների վերաբերյալ մանրամասն՝ <http://modem.beeline.am/am/main/index.wbp#.VnslsrZ97cs>
- ADSL մոդեմների գների վերաբերյալ մանրամասն՝ <http://hiline.beeline.am/am/adsl/modem.wbp#.Vnemo7Z97cs>

Ինտերնետ ծառայության արժեքը կախված է սակագնային փաթեթի ընտրությունից.

- Շարժական ինտերնետի սակագնային փաթեթների վերաբերյալ մանրամասն՝ <http://modem.beeline.am/am/main/tariffs/index.wbp>
- Hi-Line սակագնային փաթեթների վերաբերյալ մանրամասն՝ <http://hiline.beeline.am/am/adsl/tarifs/unlimited/stream.wbp>
- Hi-Line Optic սակագնային փաթեթների վերաբերյալ մանրամասն՝ <http://hiline.beeline.am/am/optic/tarifs/ultra.wbp#.Vneo9LZ97cs>